կատարեցաւ խորհուրդ Դոնաբացին՝ որ ի ներս մըտնէաք, նա՛ իբրև զծով ծփայլն և ալեաց նման ի վերայ մեր եկեալ, ի դուռն զարնէին զմեզ որ առաջի կայաք։ Եւ յորժամ ասացին՝ Այս դուռն Տեառն է և այլն, նա՛ ի ներս մտանէաք, յամբոխի կապակցութենէն չկարացաք ի ներս մտանել. եւ որ առաջի կային՝ հազիւ յետ պահու քակեալ մի մի անկաք ի ներս։ Վարդապետաք եւ երիցունք ի խորանն ելան եւ կէսքս ի վերայ. եւ եղեւ շարականն և զԱրեւելքն ասացաք ժե տուն՝ և ապա լցաւ եկեղեցին և կէս ժողովուրդն ի դուրս մնացին. և կարգաց լինքն զԱւետարանն և արձակեցաք։

Բշի օրս (31 Մարտ) իմացաք թէ Վարդապետին հախին համար հուճէթ կու հանէ Մուղնեցին թէ Տաճիկ է. և լըւեալ զայս Վարդապետին՝ ի բարկութիւն շարժեալ թէ Զայս զապուլ չեմ աներ. թէ ինչ ասացին կամ ինչ բամբասանս՝ նոքա թո՛ղ մնան, բայց այժմ զի՞նչ անուն է այս չար, զայս չեմ զապուլ աներ, շուտով գտէ՛ք զգործող ասցին։

Եւ Դշի (1 Ապրիլ) առաւօտուս Մարտիրոս վարդապետն ի յԱստուածածին դաս քաշեց՝ թէ այսպիսի գործք կան, և որք համախոհք էին երիցունք Մուղնեցուն՝ հալածեցին յեկեղեցոյն եւ զփիլոնքն առին թէ Դուք գիտակ էք այսմ բանիցս, եկայք զստոյգն[1] ասացէ՛ք։ Եւ երիցունքն գնացեալ և ասացեալ Թէրզուն Գրիգորի զիրսն, եւ նա չիք ի մեղս եղեալ բանին. եւ կրկին անգամ դաս քաշեց եւ նզովիւք անիծեաց թէ Ով գիտէ զբանս՝ թէ ո՛վ է արարեր կամ ունի եւ չտայ։ Եւ իրիցունքն երթալով ի Թէրզին, լալով աղաղակելով թէ Տարին մի անգամ է աւուրքս

1) զստուգն.